Հավելված N 2
ՀՀ վարչապետի N 881 - Ն
որոշման

**ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար**
**_____ին**
**Մարդու իրավունքների եվրոպական դատարանի**
**դատավորի պաշտոնում**
**Հայաստանի Հանրապետության կողմից**
**առաջադրվող թեկնածուի հավակնորդ**
**_____ից**

**Դիմում**

**Հարգելի՛ _____,**

Ցանկություն ունեմ մասնակցելու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությանը:

Կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

□ ինքնակենսագրություն՝ հայերեն, անգլերեն (կամ ֆրանսերեն).

□ հայտարարություն՝ մարդու իրավունքների ոլորտում փորձառության և ձեռքբերումների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր դառնալու շարժառիթների մասին.

□ անձնագրիս պատճենը.

□ բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճանի առկայությունը հաստատող փաստաթուղթ.

□ մասնագիտական գործունեության կամ դասավանդման փորձի առկայությունը հաստատող փաստաթուղթ.

□ Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներին ազատ տիրապետելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ (առկայության դեպքում).

□ հայտարարություն, որով հավաստում եմ, որ չեմ դրսևորել որևէ վարքագիծ, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն կարող է առերևույթ վարկաբեկել դատական իշխանության հեղինակությունը կամ անհամատեղելի է դատավորի բարձր կոչման հետ, կամ հայտարարություն նման ցանկացած վարքագծի դրսևորման վերաբերյալ.

□ հայտարարություն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի հանգամանքների բացակայության վերաբերյալ.

□ հայտարարություն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում ընտրվելու դեպքում սահմանափակումների ենթարկվելու հանձնառության վերաբերյալ. երկու երաշխավորագիր.

□ հայտարարություն անհատական տվյալներ ստանալու համաձայնության վերաբերյալ.

□ դիմումը.

□ այլ վերաբերելի փաստաթղթեր (թվարկել)։

Հայտնում եմ նաև, որ ծանոթացել եմ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի օգոստոսի 31-ի N 882 - Ա որոշմանը, ինչպես նաև սույն որոշմամբ սահմանված պահանջներին և ընթացակարգերին։

Առդիր՝ _____էջ։

Ստորագրությունը_____

Ամսաթիվը_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

31.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ